

000

**ԱՐՏԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՆԳՐԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ**

Գ. Հ. ՄԻՐԶՈՅԱՆ

Իր ավարտին մոտեցող 20-րդ դարը հարուստ է մարդկային քաղաքակրթության համար ճակատագրական նշանակություն ունեցող պատմական իրադարձություններով, ինչպես, օրինակ, առաջին և երկրորդ աշխարհամարտերը, միջուկային էներգիայի հայտնագործումը ու օգտագործումը, տիեզերագնացության ու հաշվողական տեխնիկայի աննախադեպ զարգացումը, նախկին ԽՍՀՄ-ի և սոցիալիստական ճամբարի փլուզումը և այլն, որոնք արժանի են առանձնահատուկ ուշադրության: Դրանց հետ մեկտեղ ներկայիս հարյուրամյակում տեղի են ունեցել նաև այնպիսի գործընթացներ, որոնք իրենց սոցիալ-տնտեսական, պատմական ու աշխարհաքաղաքական հետևանքներով, եթե ոչ նույնքան հզոր ու զգալի, ապա այնուամենայնիվ կարևոր հետք են թողել համաշխարհային պատմության ընթացքի վրա: Վերջիններիս շարքը կարելի է դասել դարիս երկրորդ քառորդի վերջերում սկիզբ առած արտադրական գործընթացի զանգվածային ելքն ազգային տնտեսությունների սահմաններից դուրս:

Այս երևույթի մասին առաջին հիշատակություններն արվել են 1935 թ. տնտեսագետ Ֆոլկ Հիլգերտի կողմից: 1960-ին Լ. Լիլենթայլը առաջին անգամ օգտագործեց «բազմազգային կորպորացիա» (Multinational Corporation) եզրը, իսկ 60-ականներին արևմտյան տնտեսագետների բազմաթիվ հոդվածներում և մեկնադրություններում առաջադրվել են մի շարք նոր անվանումներ՝ «բազմազգային», «միջազգային», «անդրազգային», «գլոբալ» կորպորացիաներ և այլն²:

Չենք կարող ասել, թե մեր երկրում արտադրության անդրազգայնացման խնդիրն ընդհանրապես անտեսվել է հետազոտողների կողմից: Բանն այն է, որ թեև խորհրդային տնտեսագիտական գրականության մեջ այն բազմիցս արծարծվել է, սակայն հիմնականում մեկ կողմնակալ նպատակով՝ բացահայտել անդրազգային կորպորացիաների «նվաճողական» և «շահագործողական» բնույթը: Ըստ այդմ, բնական է մտածել, որ արտադրության անդրազգայնացման և դրա սոցիալ-տնտեսական ու աշխարհաքաղաքական հետևանքների գիտական ուսումնասիրությունը մեզանում գտնվում է սկզբնական փուլում:

Փանի որ հայերեն տնտեսագիտական գրականության մեջ այս գործընթացի հետ կապված տեսական ու գործնական խնդիրները նոր միայն պետք են ուշադրության արժանանալ, ուստի, իմ կարծիքով, ճիշտ կլինի, հաշվի

¹ Տե՛ս F. Hilgert, The Approach To Bilateralism, a Change in Structure of World trade, Stockholm, 1935:

² Սահմանումների մասին տե՛ս «Multinational Corporations in World Development», NY, 1973:

առնելով ինչպես իմաստարանական, այնպես էլ բարեհնչույթյան հանգամանքը, գործածել «Անդրազգային կորպորացիա» (Transnational Corporation) կզբը (այսուհետև՝ ԱԱԿ), մանավանդ որ այն այժմ գործածվում է ՄԱԿ-ի տնտեսական կազմակերպությունների կողմից:

Արտադրական գործընթացի ազգայնացումը և հատկապես նրա մակրոտնտեսական ու աշխարհաքաղաքական հետևանքները տեսական և գործնական կարևոր նշանակություն ունեն տնտեսական ինտեգրացման և համաշխարհային տնտեսության զարգացման ներկա պայմաններում: Արտադրության անդրազգայնացումն ամուր և հաստատուն հիմք է ստեղծում համաշխարհային տնտեսության հետագա ընդլայնման և ամբողջականացման համար:

Խնդրո առարկա տնտեսական երևույթը բուռն թափ ստացավ հատկապես Երկրորդ աշխարհամարտից հետո՝ թեկնոսելով նոր փուլ, որի բնորոշ առանձնահատկությունն ամերիկյան կորպորացիաների կողմից կապիտալի զանգվածային արտահանումն էր Արևմտյան Եվրոպայի երկրներ, ինչպես նաև հենց Եվրոպայի ներսում ինտեգրացիոն գործընթացների ինտենսիվացումը:

Վերջապես, մեր օրերում անդրազգային արտադրությունը հասել է վիթխարի չափերի՝ ընդգրկելով ամբողջ Երկիր մոլորակը: Անհերքելի փաստ է, որ ԱԱԿ-ների կողմից իրականացվող օտարերկրյա ուղղակի ներդրումները (այսուհետև՝ ՕՈՒՆ) այժմ վճարող դեր են խաղում բազմաթիվ ազգային տնտեսությունների ինտեգրացման և միջազգային արտադրական փոխկապակցված ու միասնական համակարգի ստեղծման գործում: Բավական է նշել, որ 1995 թ. տվյալներով աշխարհում հաշվվում են 40 000 ադրազգային մայր և շուրջ 250 000 դուստր ձեռնարկություններ⁸, որոնք ավելի մեծ ազդեցություն են ունենում միջազգային տնտեսական (և ոչ միայն տնտեսական) գործառնությունների շափերի և բնույթի վրա: Դրանում համոզվելու համար ասենք միայն, որ համախառն ՕՈՒՆ-ը և արտասահմանյան մասնաճյուղերի շրջանառությունը, որոնք անդրազգային արտադրության համընդհանուր ցուցանիշներ են, 1993-ին համապատասխանաբար կազմել են 2.3 և 5.2 տրիլիոն ԱՄՆ դոլար (տե՛ս աղյուսակ 1): Առավել ուշագրավ է այն, որ 90-ական թվականների առաջին տարիներին ՕՈՒՆ-ի աճի տեմպը միշտ գերազանցել է համաշխարհային արտադրության (համախառն արդյունքի) աճի տեմպին:

աղյուսակ 1

ԱԱԿ-ները և համաշխարհային ՕՈՒՆ-ները⁴
(ֆինանսա-տնտեսական ցուցանիշներ)

Ցուցանիշ	Ծավալը 1993-ի գներով	Նիշին տարեկան աճի տեմպ (1981—93 թվականներին, %)		
		ԱՄՆ դոլ. միլիարդ	81—85	86—90
ՕՈՒՆ-ների արտահան	222	0.8	28.3	5.6
ՕՈՒՆ-ային արտաքին արժեթղթեր	2 135	5.4	19.8	7.2
ԱԱԿ-ների օտարերկրյա մասնաճյուղերի վաճառքը	5 235	1.3	17.4	-2.6
ԱԱԿ-ների համախառն ազ- գային արտադրությունը	23 276	2.1	10.6	3.3
Ապրանքների և ոչ արտադրական ծառայությունների արտահանում	4 762	-0.1	14.3	3.5

⁸ Մանրամասն տե՛ս «World Investment Report: TNC-s and competitiveness», NY, 1995:

⁴ Տվյալները վերցրել ենք նույն աղբյուրից:

Իբրև համաշխարհային գործընթաց, արտադրության անդրազգայնացումը ուղղակի կամ անուղղակի ձևով իր ազդեցությունն ունի աշխարհի ցանկացած մասում և տարածաշրջանում, ընդ որում՝ ոչ միայն տնտեսական, այլև քաղաքական, մշակութային, դեմոգրաֆիկ և այլ առումներով: Ուստի վերջին տասնամյակում տեղի ունեցած համաշխարհային-պատմական իրադարձությունները՝ սոցցամբարի վերացում, նախկին ԽՍՀՄ-ի փլուզում, նրա տարածքում բազմաթիվ նորանկախ պետությունների ձևավորում ու նրանց կողմից տնտեսության զարգացման շուկայական ուղու ընտրություն, արտադրության անդրազգայնացման գործընթացի հետ կապված բազմաթիվ նոր հիմնահարցեր առաջ բերեցին, որոնք կարևորվում են ինչպես կապիտալ արտահանող, այնպես էլ ներմուծող երկրների շահերի տեսանկյունից:

Ինքնին հասկանալի է, որ այդ տեսակետից բացառություն չի կարող կազմել նաև Հայաստանի Հանրապետությունը, որի առջև, որպես նախկին ԽՍՀՄ-ի տարածքում ստեղծված նորանկախ պետություն, ամենասուր ձևով ծառայած է սեփական տնտեսության ու արդյունաբերության զարգացման գերխնդիրը, որի լուծման հիմնական ուղիներից է օտարերկրյա կապիտալի ներգրավումը: Հենց այս հանգամանքը հաշվի առնելով՝ ներկա հողվածում կցանկանալի ուշադրություն դարձնել ԱԱԿ-ների՝ Հայաստան մուտք գործելու և այդ երևույթի հետ առնչվող մի շարք այլ հարցերի վրա:

Հայտնի է, որ տնտեսավարման պլանային համակարգի օրոք մեր հանրապետության տնտեսական քաղաքականությունը թելադրվում էր միութենական կենտրոնի կողմից և նպատակաուղղված էր համամիութենական խընդիրների լուծմանը: Ըստ այդմ, աշխատանքի բաժանումը և մասնագիտացումը ընթանում էր ոչ թե համաշխարհային, այլ համամիութենական, մասամբ նաև նախկին սոցիալիստական երկրների շրջանակներում: Բնականաբար, նման պայմաններում խոսք էր կարող լինել ազգային տնտեսության զարգացման, համաշխարհային տնտեսության մեջ նրա ինտեգրացման և բնականոն զարգացման մասին: Ինքնին հասկանալի է, որ այդօրինակ տնտեսական ու արդյունաբերական համալիրը, որքան էլ որ այն լիներ հզոր ու զարգացած, չէր կարող հեշտությամբ անցում կատարել շուկայական հարաբերությունների: Ուստի պատահական չէ, որ շուկայական տնտեսության անցման առաջին իսկ քայլերից այն սկսեց վատ գործել, իսկ նախկին տնտեսական կապերի խզման հետ խարխիվեց՝ ինչպես Հայաստանում, այնպես էլ նորանկախ բոլոր մյուս երկրներում: Ինչ խոսք, այդ հանգամանքը խիստ բացասաբար անդրադարձավ մեր ժողովրդի տնտեսական, քաղաքական ու գիտամշակութային կյանքի վրա:

Ներկայումս, երբ մեր հանրապետությունը դարձել է քաղաքական և տնտեսական ինքնուրույն միավոր, չափազանց կարևորվում է համաշխարհային տնտեսության մեջ որակապես նոր հիմունքներով մեր էկոնոմիկայի ինտեգրացման խնդիրը: Քանի որ այդ ուղղությամբ մեր պետությունը դեռ նոր միայն կատարում է առաջին քայլերը, ուստի անհրաժեշտ է ժամանակին լուսաբանել այդ գործընթացի հետ կապված հարցերը, կշռադատել դրական ու բացասական հնարավոր հետևանքները:

Ցավոք, շուկայական տնտեսության անցման հենց առաջին փուլում մեր տնտեսությունն ընկավ չափազանց ծանր կացության մեջ, որն ունեւր ինչպես օբյեկտիվ (անբարենպաստ աշխարհաքաղաքական դիրք, տնտեսական շրջափակում ու էներգետիկ ճգնաժամ, քաղաքական անկայունություն և Արցախի ազատագրական երկարատև պատերազմը), այնպես էլ սուբյեկտիվ (շուկայական տնտեսավարման ու պետական կառավարման փորձի պակասը, որոշ

դեպքերում երկրի ունեցվածքի հանդեպ անփուլթ ու անհոգի վերաբերմունքը, երբեմն՝ կողոպտելու ու թալանելու հոգեբանությունը և այլն) պատճառներ: Անշուշտ, թվարկված ու չթվարկված համանման շատ այլ պատճառներ դեռ շարունակում են գործել, դեռ կան բազմաթիվ լուրջ դժվարություններ, որոնք պահանջում են շուտափուլթ հաղթահարում, բայց, կարծում եմ, հիմքեր կան ասելու, որ ԽՍՀՄ-ի փլուզմանը հաջորդած տնտեսական ահավոր ճգնաժամը ներկայումս ընդհանուր առմամբ սկսել է հաղթահարվել, արդեն նշմարվում են տնտեսության աշխուժացման առաջին նշանները:

Միանշանակ կարող ենք ասել, որ մեր երկրի տնտեսական վերակենդանացումը և հետագա զարգացումը հիմնականում պետք է կապել արդյունաբերական համալիրի տեխնիկական ու տեխնոլոգիական արմատական վերակառուցման ու վերազինման, սեփականատիրական՝ սկզբունքորեն նոր հարաբերությունների ձևավորման ու զարգացման և տնտեսական կառուցվածքային այլ բարեփոխումների իրագործման հետ: Հարկավ, այս ամենը պահանջում է ֆինանսական հզոր միջոցներ, որոնք, ցավոք, ներկայումս չունի մեր հանրապետությունը: Ֆինանսական սեփական միջոցների բացակայության դեպքում, բնական է, պետք է մտածել արտաքին աղբյուրների ներգրավման մասին, որոնցից առայժմ ամենահզորն ու հուսալի մնում են օտարերկրյա ներդրումները, իսկ, ինչպես արդեն ասվել է, օտարերկրյա ներդրումների ամենամեծ բաժինը ընկնում է ԱՄՆ-ներին: Ասենք նաև, որ ԱՄՆ-ների դերը չի սահմանափակվում միայն ֆինանսական ներդրումներով, այլ նրանք կարող են դառնալ նաև նոր տեխնոլոգիաների և ձեռնարկատիրական ունակությունների ներմուծման հզոր աղբյուր: ԱՄՆ-ների դերը մեր հանրապետությունում ավելի է կարևորվում հատկապես կապված սեփականաշնորհման գործընթացի հետ: Բանն այն է, որ Հայաստանում սեփականաշնորհման գործընթացն առայժմ, ըստ էության, կրում է ձևական-իրավական բնույթ, այսինքն՝ սեփականաշնորհումը փոխում է միայն սեփականատերերին, որից երկրի տնտեսությունը ոչ միայն շոշափելի ոչինչ չի ստանում, այլև ունենում է զգալի կորուստներ: Բավական է ասել, որ սեփականաշնորհման հետևանքով հանրապետության արդյունաբերությունը չի ունեցել տեխնիկական ու տեխնոլոգիական որևէ էական առաջընթաց, ընդհակառակը, դադարել են գործելուց արդյունաբերական բազմաթիվ ձեռնարկություններ, իսկ մյուսները գործում են իրենց արտադրական կարողությունների շնչին մասով և այն էլ՝ բարոյապես ու ֆիզիկապես վաղուց իրենց սպառած տեխնիկական ու տեխնոլոգիական միջոցներով: Այդ է պատճառը, որ ապրանքային շուկայից չբացել են հայրենական արտադրության շատ ու շատ ապրանքներ՝ իրենց տեղը զիջելով արտասահմանյան արտադրության ապրանքներին, որոնց որակը շատ դեպքերում կասկածների տեղիք է տալիս՝ հատկապես գնի հետ հարաբերելիս:

Մեզանում սկսված սեփականաշնորհման մյուս կարևոր բացն այն է, որ գործընթացի սկզբից, փաստորեն, չի խրախուսվել օտարերկրյա մասնակցությունը, որի հետևանքով Հայաստանի Հանրապետությունը Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրների շարքում իբրև ՕՌՆ-ի ղեկավարներ զբաղեցնում է նախավերջին տեղը՝ գերազանցելով միայն հարևան Վրաստանին (տե՛ս աղյուսակ 2): Կարծում եմ, որ ներկայումս մեր տնտեսությունում առկա ֆինանսական միջոցների դեֆիցիտը վերացնելու և ըստ այդմ հանրապետության առջև ծառայած մակրոտնտեսական ու սոցիալական հիմնախնդիրները (ինչպիսիք են տնտեսական աճի ապահովումը, գործազրկության և բնակչության զանգվածային արտագաղթի նվազեցումը, արդյունաբերական համալիրի տեխնոլոգիական վերազինումը, վճարային հաշվեկշռի կար-

գավորումը և այլն) լուծելու համար կառավարությունը պետք է լուրջ քայլեր ձեռնարկի օտարերկրյա ուղղակի ներդրումների ծավալը մեծացնելու ուղղությամբ:

ՕՈՒՆ-Ների հոսքը կենտրոնական և արևելյան Եվրոպայի երկրներ⁵ աղյուսակ 2

Երկիր	Ներհոսք					Արժեթղթեր			արժեթղթերի բաշխ. երկրների միջև, %
	90	91	92	93	94	95	94	95	
տարի (19)	90	91	92	93	94	95	94	95	95
Հունգարիա	—	1462	1479	2349	1144	3500	6434	9934	29.6
Լեհաստան	89	291	678	1715	1875	2510	4879	7389	22.0
Չեխիա	—	—	—	654	878	2500	2508	5008	14.9
Ֆրանսիա	—	—	700	700	1000	2000	2400	4400	13.1
Սլովակիա	—	—	—	199	203	250	890	1140	3.4
Ֆրանսիա	—	40	77	94	340	373	551	924	2.8
Ուկրաինա	—	—	200	200	159	200	559	759	2.3
Ղազախստան	—	—	100	150	185	284	435	719	2.1
Քստոնիա	—	—	82	162	214	188	458	646	1.9
Լատվիա	—	—	29	45	215	250	289	539	1.6
Սլովենիա	—	—	111	113	84	130	308	438	1.3
Հարավսլավ.	67	118	64	25	—	—	400	400	1.2
Բուլղարիա	4	56	42	55	106	135	263	398	1.2
Ուլբանիստան	—	—	40	45	50	115	135	250	0.7
Ալբանիա	—	—	20	58	53	70	130	200	0.6
Ադրբեջան	—	—	—	—	—	110	—	110	0.3
Լիտվա	—	—	10	12	31	50	53	103	0.3
Մոլդովա	—	—	17	14	23	32	54	86	0.3
Բելուսուս	—	—	7	10	15	20	32	52	0.2
Ղրղզստան	—	—	—	—	10	15	10	25	0.1
Տաջիկստան	—	—	—	—	10	15	10	25	0.1
Հայաստան	—	—	—	—	8	10	8	18	0.1
Վրաստան	—	—	—	—	—	—	—	—	—
ԸՆԴՀԱՆՈՒՐ	160	1966	3657	6600	6603	12757	20808	33565	100

Այդ տեսակետից ամենակարևորը, իմ կարծիքով, սեփականաշնորհման ազատականացումն է: Ժիշտ է, վերջին տարիներին այս իմաստով որոշակի քայլեր կատարվում են, բայց, ցավոք, դրանք հեռու են բավարար լինելուց:

1996 թ. հուլիսի տվյալներով մեր հանրապետությունում օտարերկրյա մասնակցությամբ ձեռնարկությունների թիվը կազմում էր ընդամենը 670, որի կեսը զբաղվում էր առևտրական գործունեությամբ: Հարկ է նշել, սակայն, որ վերջին տարիներին օտարերկրյա ներդրումների աճ է նկատվում նաև արդյունաբերական, բանկային և այլ ոլորտներում, 1996—98 թթ. ձևավորվեցին օտարերկրյա մասնակցությամբ այնպիսի ընկերություններ, ինչպիսիք են «Կոկա Կոլա Բոթլերզ Արմենիա»-ն, «Միդլենդ» բանկի հայկական մասնաճյուղը, «Գլոբալ Գոլդը», «Գրանդ Տոբակոն», «Ֆարմատեք»-ը և այլն: Հայաստանի նկատմամբ սկսեցին հետաքրքրություն ցուցաբերել այնպիսի հզոր անդրազգային կորպորացիաներ, ինչպիսիք են «Simens»-ը, որը վերջերս Հայաստանում հիմնեց իր ներկայացուցչությունը և պատահական չէր նաև բազմաթիվ ցուցանիշներով (համախառն շրջանառություն, հիմնական միջոցներ, աշխատողների և օտարերկրյա մասնաճյուղերի թիվ) աշխարհում առաջինը հանդիսացող «General Motors» ԱԱԿ-ի ղեկավար որոշ պաշտոնյաների տարեսկզբյան այցը Հայաստան ու ցուցաբերած հետաքրքրությունը «Երազ» ավտոմոբիլաշինական գործարանի նկատմամբ: Շատ հեռանկարային է նաև ամերիկահայ խոշոր գործարար, այսօր արդեն

⁵ Աղյուսակը կազմել ենք ըստ հետևյալ աղբյուրի՝ «World Investment Report 1996: Investment, Trade and International Policy Arrangements», pge. 64, NY 1996:

⁶ Մանրամասն տե՛ս «World Investment Report: TNC-s and competitiveness, NY, 1995:

«Daimler Benz»-ի հետ միավորված «Craister» ավտոմոբիլաշինական կորպորացիայի գլխավոր բաժնետեր Քրոբ Քիրքորյանի այցելությունը Հայաստան: Նրա այցը կարևորվում է ոչ միայն հատկացված 100 մլն. ԱՄՆ դոլար կազմող արդյունաբերության վերակառուցման վարկի տրամադրումով և տասնյակ միլիոնների հասնող նվիրատվություններով, այլ նաև շատ կարևոր ու արդյունավետ կարող է լինել նրա ունեցած կապերի օգտագործումը: Արդեն իսկ նախնական պայմանավորվածություն կա նրա միջոցով կապ հաստատելու «IBM» կորպորացիայի հետ՝ առկա արդյունաբերական ներուժի հիման վրա Հայաստանում միկրոչիպերի և, հնարավոր է նաև, համակարգչային տեխնիկայի արտադրության կազմակերպման ուղղությամբ:

Մեր քիմիական, էլեկտրատեխնիկական և մեքենաշինական (հատկապես հաստոցաշինական) ձեռնարկությունները շատ հեռանկարային են ԱԱԿ-ների համար: Եվ դա արդեն իսկ զգալի է: Օրինակ, էլեկտրատեխնիկական ԱԱԿ-ները («JVC», «Sony», «Samsung», «Philips» և այլն) արդեն սպառման ներկայացուցչություններ ունեն Հայաստանում և բացառված չէ, որ մոտ ապագայում դրանց բազայի վրա ստեղծվեն հավաքման ձեռնարկություններ՝ բնականաբար՝ օգտագործելով առկա արդյունաբերական ներուժը:

Հայաստանում գործող օտարերկրյա մասնակցությամբ ձեռնարկությունների առկայությունը և բարեհաջող գործունեությունը կարող է «շղթայական ռեակցիա» առաջացնել, այսինքն՝ դրանց հաջողակ գործունեությունը գրավական կհանդիսանա նմանատիպ այլ ներդրողների ու ներդրումների համար: Դրա լավագույն հաստատումն է թեկուզև այն փաստը, որ 1996 թ. մայիսից մինչև սեպտեմբերը, այսինքն՝ ընդամենը 3—4 ամսվա ընթացքում Հայաստանը «Euromoney»-ի երկրների ռիսկերի վարկանիշային աղյուսակում 150-րդ տեղից բարձրացավ՝ հասնելով 137-ին: Ընդ որում նախկին ԽՍՀՄ-ի երկրների շարքում նույն ցուցանիշի տեսակետից Հայաստանը զբաղեցնում է 8-րդ տեղը⁷:

Սակայն սա գործընթացի սկիզբն է միայն: Մեր տնտեսական ենթակառուցվածքը դեռևս շատ թույլ տեղեր ունի: Հարկավոր է զարգացնել կոմունիկացիոն համակարգը, տրանսպորտը, բարելավել ճանապարհների և երկաթուղու վիճակը (այդ ուղղությամբ մեծ նվաճում կարելի է համարել «Զվարթնոց» օդակայանում միջազգային ստանդարտներին համապատասխան բեռնահամալիրի կառուցումը, որը Հայաստանը ժամանակի ընթացքում կդարձնի տարածաշրջանում տարանցիկ օդային բեռնափոխադրումների խոշոր և միզուցե խոշորագույն կենտրոն) և վերջապես ապահովել կայուն ու երաշխաբային օրենսդրական դաշտ՝ ՕՈՒՆ-ները խթանելու նպատակով: Պետք է մեծացնել նաև ՕՈՒՆ-ները խթանող ֆիսկալ գործիքների կիրառությունը՝ «հարկային արձակուրդներ», արտահանման, ներմուծման և այլ արտոնություններ: Զե՞ որ ունենալով փոքր ազգային շուկա՝ մեր տնտեսությունը պետք է աշխատի նաև արտահանման ուղղվածություն ունեցող ՕՈՒՆ-ները խրախուսելու ուղղությամբ: Ավելին, այդ առումով Հայաստանը տարածաշրջանում բավական գրավիչ առավելություններ ունի՝ համեմատաբար որակյալ և շահագրանց էժան աշխատուժ, քաղաքական և տնտեսական հարաբերաբար կայուն իրավիճակ ու բավական հզոր արդյունաբերական ներուժ: Պատահական չէ, որ դեռևս Խորհրդային իշխանության տարիներին Հայաստանում նոր տեխնոլոգիաների և արտադրությունների յուրացման ժամանակահատվածը գրեթե կրկնակի անգամ պակաս էր միոթենական անհրաժեշտ միջինից:

7 Մանրամասն տե՛ս «Euromoney», September, 1996:

Ասվածից հետևում է, որ հանրապետության միջին և խոշոր արդյունաբերական ձեռնարկությունների սեփականաշնորհման ծրագրերի մշակման և իրականացման ժամանակ կարևոր տեղ պետք է տալ դրանց օտարերկրյա ուղղվածության պարագային: Պատճառը միանգամայն պարզ է՝ այդ ձեռնարկությունները ֆինանսական զգալի միջոցների խիստ կարիք ունեն, որոնք առայժմ մեր հանրապետությունում չկան, ուստի մնում է մտածել դրանք դրսից ներգրավելու մասին:

Վերջում կցանկանալի ուշադրություն հրավիրել արտատնտեսական մի երևույթի վրա, որը անուղղակիորեն կարող է լրջորեն վնասել տնտեսության զարգացմանը: Թեև վերջին տարիների տնտեսական որոշ իրողություններ խոսում են հօգուտ ԱՄԿ-ների և օտարերկրյա ներդրումների, բայց, ցավոք, մեր հասարակության լայն խավերի գիտակցության մեջ ավանդույթի ուժով արմատավորված է խորհրդային տարիներից եկող այն պատկերացումը, որ օտարերկրյա կապիտալի ներգրավումը հանրապետության տնտեսության մեջ հակասում է մեր ժողովրդի ազգային, պետական ու հասարակական շահերին: Անշուշտ, չբացառելով նման վտանգի հնարավորությունը, կարծում եմ, տնտեսական զարգացման յուրաքանչյուր հարց քննարկելիս առաջին հերթին պետք է ղեկավարվել ռացիոնալ հաշվարկներով և ոչ թե հուզական նկատումներով:

Այս տեսանկյունից խիստ հատկանշական է Երևանի կոնյակի գործարանի վաճառքի առթիվ քաղաքական, հասարակական լայն խավերի և զանգվածային լրատվամիջոցների բարձրացրած աղմուկը: Ես ինձ իրավունք չեմ վերապահում սույն հոդվածում քննարկել այդ գործարքի արդյունավետությանը և գործարանի գնին վերաբերող խնդիրները, սակայն ինքնին հետաքրքիր է այն փաստը, որ բազմաթիվ փոքր և միջին արդյունաբերական ձեռնարկություններ սեփականաշնորհվել են ուղղակի սիմվոլիկ գներով, բայց ոչ Ազգային Ժողովում, ոչ էլ մամուլում և այլ ԶԼՄ-ներում նման ուշադրության չեն արժանացել: Կամ՝ եթե կոնյակի գործարանի վաճառքի նպատակահարմարությունն ու արդյունավետությունը լուրջ տարակուսանքների տեղիք են տալիս, ապա կասկածելու ոչ պակաս հիմքեր կան միջազգային աճուրդով «Արմենթեյ» ընկերության վաճառքի կապակցությամբ, քանի որ գործարքի միջնորդ կազմակերպությունը և Հայաստանի կառավարության անունից հանդես եկող անձինք թե՛ մեկ և թե՛ մյուս դեպքերում նույնն են:

Հետևաբար օտարերկրյա ներդրումների ցանկացած առաջարկություն ոչ պետք է հախուռն կերպով մերժել և ոչ էլ կուրորեն ու գրկաբաց ընդունել, այլ անհրաժեշտ է լրջորեն ուսումնասիրել դրա հետ կապված թե դրական և թե բացասական հնարավոր բոլոր հետևանքները մեր հանրապետության հասարակական, տնտեսական ու պետական շահերի տեսանկյունից և նոր միայն ասել՝ այո՛ կամ ո՛չ:

Д. Г. МИРЗОЯН — Транснационализация производства и Республика Армения.— Принимая за основу современный процесс развития мировой экономики, в статье развивается мнение, что как новое независимое государство Республика Армения для глобального решения проблем своего хозяйства должна привлекать иностранный капитал, для чего республика располагает рядом благоприятных условий. Однако учитывая возможные последствия транснационализации производства в области экономики, политики, культуры, демографии и экологии, автор заключает, что в вопросе внедрения иностранного капитала следует проявлять взвешенный и осторожный подход, необходимо серьезно изучать каждое предложение в аспекте политических, общественных и экономических интересов страны.